

## ՀԱՅՈՑ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆԸ գրի առնուած Իսլամի մը կողմէ

### Նախաբան

Ես, հեղինակս բեղվին եմ, շեյխի որդի, Էլ-Սուլույթի տոհմից, Էլ-Լեդյաթում հատրանի մարզից: մյուս շեյխերի որդիների նման ես էլ եկա Կ. Պոլիս դպրոց եւ ապա կայսերական դպրոց: Ուսումնս կատարելագործել եմ Դամասկոսում գործողման ժամանակ Վալիում, Սիրիայի զինվորական ստորաբաժանմունքում, ուր եւ մնացել եմ երկար ժամանակ: Այնուհետեւ ես որպէս խորհրդական Մամուրեթ-ուլ-Ալիսում մնացի երեք տարի ու կես, նաեւ որպէս դատապաշտպան հաստատվեցի Դամասկոս: Որպէս Հատրանի ներկայացուցիչ դարձա այդ քաղաքի մարզային ժողովների անդամ, իսկ ավելի ուշ խորհրդի անդամ: Պատերազմի բռնկման ժամանակ ես պարտավոր էի որպէս երկրի խորհրդի անդամ, նորից ստանձնել իմ նախկին ծառայությունս, սակայն խնդրանքը մերժեցի, քանի որ իմ փաստաբան լինելու փորձի հանգամանքն օգտակարութիւն բերեց շատ տեսանկիւններից:

Մատնութեան պատճառով, ես մեղադրվեցի որպէս կուսակցութեան անդամ, թե՛ իբր արաբական ժողովուրդը Անգլիայի եւ Ֆրանսիայի հովանավորութեամբ ցանկանում է ազատունել Թուրքիայից, կառավարութեան կողմից ձերբակալուեցի, բանտարկուեցի եւ շղթաներով ոստիկանների հսկողութեան ներքո ուղարկուեցի Ահալիա, քաղաքական գործիչների մի արտարավայր:

Դատի ժամանակ ես թե՛ն արդարացուեցի, սակայն կառավարութիւնը հոգաց այդպիսի դատաւճիթի կայացումից հետո ոչ մի ընթացք չտալ, որովհետեւ նրանք որոշել էին ամեն կերպ մի ազդեցիկ եւ ուսեալ արաբի վերացնել: Հետեւանքը եղավ այն, որ ես Էրզրում արտարունեմ, ուր ինձ Ձեմալ փաշան մի սպայի եւ հինգ զինվորների պահակախումբի ուղեկցութեանը հանձնեցին: Երբ ես Դիարբեքի եկա, Էրզրումը Ռուսաստանի սպառնանքի տակ էր եւ Վալիին հրաման տուեց ինձ Դիարբեքի արտարունել:

Քսաներկու օրից հետո, ուր ես առանց որեւէ հիմնավորումի բանտում մնացի, ինձ ազատ արձակեցին: Ես վարձեցի մի բնակարան եւ մնացի վեց ու կես ամիս Դիարբեքի արտարում, ուր եւ ամենալավ աղբիւրներից տեղեկացա կամ էլ սեփական աչքերով տեսա, թե՛ այստեղ ինչ կատարվեց հայերի հետ: Ինձ հաղորդողների մեծ մասը բարձրաստիճան սպաներ, պետական ծառայողներ ու գրառողներ էին Դիարբեքից եւ այլ քաղաքներից, ինչպէս Բիթլիսը, Մամուրեթ-ուլ-Ազիզը, Հալեպը եւ Էրզրումը, որոնք եկել էին Դիարբեքի: Նախկին երկրի խորհրդի անդամ, Վիլայեթի դրացիների մեջ ես ունեի շատ ծանոթներ եւ լսեցի այն ամենը, ինչ որ կատարուում էր: Պատերազմից հետո այն ամենը ճշմարտութիւն դարձավ, ինչ ես գրի էի առել, եւ այն, որ դա միայն մի փոքր մասն էր սարսափի, որը սկսուեց թուրքերի կողմից դժբախտ հայերի նկատմամբ, որը եւ հեշտ է տեղեկացնել:

Որոշ ժամանակ անց ես փախա Դիարբեքից, որ պրծնեմ թուրքերի գերութիւնից եւ ֆանատիզմից:

Մեծ նեղութիւններով եւ հաճախ մահուան վտանգներով ես հասա Բագրա ու որոշեցի այդ տեղեկութիւնները հրապարակել, ճշմարտութեանը եւ թուրքերի կողմից տրորուած հայ ժողովրդին ծառայութիւն մատուցել, միաժամանակ նաեւ պաշտպանելով Իսլամի հավատը ընդդէմ Եվրոպայի կողմից ֆանատիզմի հանդիմանութեան: Աստուած կարող է մեզ դեպի ճշմարիտ ուղին առաջնորդել:

Այս ներածականը գրեցի ի թուին 1սեպ. 1916, Բոսթան

Fa'iz El- Ghusein

## Ինչնր ապրնցի

Իմ Հայնպ ժամանումից եւ այնտնդ երկու օր մնալուց հետո, մենք օգտագործնցինք մի գնացք մինչն Դեր-Աբաբ-Փունար կանգառը: Իմ ճանապարհորդակից ընկերները հինգ հայեր էին, որոնք ուժնդ հսկողութեան ներքո Դիարբեթի էին արտրվելու: Աբաբ-Փունարից մենք ոտքով գնացինք մինչն Գերուշ, ուր մենք մի ԽԱՆ կանգառ արնցինք, որը լցված էր հայ կանանցով ու հաճախորդներով եւ ուր միայն եւ էի եւ մի քանի հիվանդ տղամարդիկ: Այդ կանայք ողբալի վիճակում էին, քանզի շատ երկար էին ճանապարհորդել Էրզրումից ոտքով եւ անվերջանալի ժամանակ էր պետք մինչն Գերուշ: Ես խոսնցի նրանց հետ թուրքերն եւ նրանք պատմնցին ինձ, որ ոստիկանները միշտ նրանց համար այնպիսի հանգստատնդեր էին օգտագործում, ուր ոչ մի կաթիլ ջուր չկար եւ հրաժարում էին նրանց ասելու, ուր կարելի էր ջուր գտնել, մինչն որ նրանք դրամ չստանային: Կանանցից ոմանք ճանապարհին իրենց երեխաներին կեանք էին պարզելում, որոնց նրանք անարդարեան անապատներում էին թողնում: Մեծ մասը իրենց երեխաներին թողնում էին ճանապարհին, սա կլիներ հուսահատութիւնից, հիվանդութիւնից կամ էլ թուլութիւնից, որ դժուար էր նրանց տանել: Ոմանք սիրտ չէին անում լքել իրենց երեխաներին եւ նրանց հետ գնում էին անապատով: Նրանք ինձ պատմնցին, որ իրենց մեջ կարող էին լինել այնպիսիները, որոնք այդպես վատ էին սովորել չէին կարող մի ժամ ոտքով գնալ, քանի որ վաղուց նրանք մեծ ծառաներ էին ուննցել եւ մեծացել էին բարեկնցիկ կեանքով: Նրանք ընկած կլինեին քուրդերի ձեռքերը, որոնք ապրում էին բարձր լեռների անտառներում, ինչպես գազաններ: Ծատերը իրենք իրենց սպանած կլինեին, Խայտառակութիւնից արծնելու համար:

Մենք Սերուշից սայլով եկանք Ուրֆա: Ճանապարհին եւ տեսա ոտքով գնացող մարդկանց մի մեծ բազմութիւն, որոնց տեսա հեռվից եւ որ նչանց թուրքական ջոկատն էր պահում: Երբ եւ մոտնցա, տեսա որ հայ կանայք էին, որոնք ոստիկանութեան հսկողութեան ներքո գնում էին շարքով հոգնած ու բոբիկ, որոնք գնում էին նրանց առջնից ու հետնում էին: Եթե հաճախ կանանցից որեւէ մեկը ետ էր մնում, ոստիկանը հարվածում էր նրան հրացանի կոթով կամ էլ հարվածում էր դեմքին, մինչն որ նա կհավաքեր իր ուժերը եւ կմիանար իր ընկերուհիներին: Նրանք հիվանդութեան պատճառով չէին կարող ավելի գնալ, այդպես թողնելով նրան ետնում, առանց որեւէ պաշտպանութեան ու սնունդի, որպես ավար վայրի կենդանիների, կամ էլ ոստիկանը գնդակահարում էր նրան:

Մեր Ուրֆա ժամանման ընթացքում տնդեկացանք, որ կառավարութիւնը ոստիկանների մի գորախումբ էր ուղարկել քաղաքի մի մաս հայերի մոտ, նրանց զենքերը բռնագրավելու, նոյնը եւ Ուրֆայի հայերի հետ էին արել ինչպես մնացածի հետ: Այնպես որ, նրանք դրանում հասկացել էին, քարավանը Ուրֆայից էր ու լիքն էր տարագրված կանանցով ու երեխաներով, հրաժարվում էին իրենց զենքերը հանձնել եւ դիմադրութիւն էին ցոյց տալիս, որի արդյունքում մի ոստիկան եւ երեք ժանդարմներ էին մահացել: Ուրֆայի իշխանութիւնը գորք էր խնդրել Հայնպից եւ Ջեմալ փաշայի հրամանով նաեւ դահիճներ Սիրիայից, եկել էր Ֆահրի փաշան թնդանութներով: Նա խփնց քաղաքի հայկական մասին փլատակներով, մեռած տղամարդկանցով եւ երեխաներով հանդերձ ու մի քանակն էլ կանանցից մինչն նրանց, որոնք իրենց քուրդերի ճակատագիրը պետք է բաժանեին Տեր-Չորի անապատ տարվելով: Նախ եւ առաջ փնտրում էին փաշայի եւ նրա սպաների համար նրանց միջից զնդնցկազույններին: Տարագրուածները խորատուգում էին հիվանդութեան եւ սովածութեան մեջ, որպեսզի նրանք թուրքերի եւ քուրդերի ձեռքերը չընկնեին:

Երբ մենք Ուրֆան թողնցինք հեռացանք, նորից հանդիպնցինք կանանց քարավանի, տանջահար ու խղճալի մինչն սպառումը, սովից ու քաղցից մահացածների, կամ էլ ճանապարհի աջ եւ ձախ կողմերում մարմինները մարմինների վրա ընկածների:

Քարանփրեմ գյուղից ոչ շատ հեռու, Ուրֆայից մոտ վեց ժամ հեռավորութեան վրա, մենք կանգառ արեցինք ուտելու համար, ոչ շատ հեռու մի աղբյուրից: Ես գնացի այն կողմ ջուր խմելու եւ ականատես եղա մի ահավոր տեսարանի: Մի կիսազգեստավորված կին արյունոտ վերնաշապիկով ընկած էր գետնին ու չորս գնդակի հարվածներ կրծքին: Ես չկարողացա ինձ զսպել եւ դառնորեն լաց եղա: Երբ ես թաշկինակով իմ արցունքներն էի մաքրում, շուրջս նայեցի, թե՛ կարող է ինձ իմ հսկիչներից մեկը տեսնել, տեսա մի երեխայի, ամենաշատը ութ տարեկան, ընկած երեսի վրա գլուխը կացնով ճեղքված: Դա ավելի ինձ վախեցրեց, բայց իմ հսկիչները արցունքներինս վերջ դրին, հետո ես լսեցի Արիֆ Էֆենդիի ձայնը, որ կանչում էր Իսահակ քահանային. »Արագ, եկ այստեղ«, - եւ ես տեսա, որ նա ինչ որ քանի համար հուզված էր: Երբ ես մոտեցա, Ի՞նչ եղա ստիպված տեսնելու: Երեք երեխաներ պառկած էին գեղաջրի մեջ եւ դողում էին իրենց ողջ մարմիններով, քանի որ քուրդները իրենց վրայից հանել էին շորերը եւ նրանց ենթարկել էին ամեն տեսակի կտտանքների, իսկ այդ ժամանակ մոտիկում կանգնած էր նրանց մայրը եւ հեծեծում էր: Նա պատմեց մեզ, թե՛ ինչպիսի հրաման էր ուղարկուած: Նա Էրզրումից էր եւ մյուս կանանց բազմութեան հետ երկար ճանապարհ էր անցել, զինվորների միջոցով մինչեւ այստեղ էր տարագրվել: Ճանապարհին փողը եւ հագուստները վերցրել էին ձեռքից, իսկ գեղեցիկ կանանց զիջել էին քուրդներին: Երբ նրանք այստեղ եկան, քուրդ տղամարդկանց եւ կանանց կողմից զրկուեցին իրենց վերջին հագուստներից, որոնք նրանք դեռ կրում էին: Այստեղ նա հիւանդացաւ, չկարողացաւ այլեւս շարունակել ու ուզում էր նա իր երեխաներին այստեղ թողնել: Վախից մերկ երեխաները ջրի մեջ էին մտել, կինը անձամբ մահուան դուռն էր: Քահանան որոշ հագուստներ որոնեց, ապա տվեց կնոջն ու երեխաներին: Սպան մի մարդու ուղարկեց ժամապահի մոտ, որը մոտերքում էր եւ հրաման տուեց ոստիկաններին, որոնց նա իր հետ վերցնի, կնոջն ու երեխաներին Ուրֆա ուղարկեն եւ պահակատան մոտերքում մարմինները հողին հաճնեն: Տիվանդ կինը ինձ պատմեց, որ մահացած կինը իրեն պահեց բռնաբարութիւնից, որի համար էլ իրեն սպանած կլինեն: Այդպես նա մահացավ պատվարժանորեն եւ պրծավ խայտառակութիւնից: Նրան կամավոր դարձնելու համար, նրանք իր որդուն սպանել էին հենց իր աչքերի առաջ, բայց նա հաստատուն էր մնացել եւ մահացավ կոտորուած սրտով:

Ճաշից հետո մենք եկանք Քարանփրեմ, ուր մեր ընկերակիցներից մեկը մեզ մի առանձին հողաբլուրի ուշադրութեանը հրաուիրեց, որը շրջանակուած էր քարերով ու ժայռակտորներով: Նա ասաց. »Այստեղ Գրիգոր Զոհրապն ու Վարդգեսն են սպանուած, որոնք հայերի հեղինակութիւն ունեցող եւ խորհրդարանում ուղարկուած պատգամավորներ էին:

Գրիգոր Զոհրապ եւ Վարդգես, ո՞վ չգիտի ու չի հիշում նրանց, որ Զոհրապը հայ պատգամավորը, Կ. Պոլսում Թուրքիայի պատգամավորների պալատում հայտնի անուն եւ ձայն ունէր: Նրա ճառերը վկայում էին նրա կրթութեան եւ խոհեմութեան մասին: Նա հնարագիտութեամբ հերքում էր հակառակորդին համոզեցուցիչ հիմնավորումներով: Իր ընկերները ամեն ինչ հաղթահարող էին: Նա իրազեկ էր բոլոր խնդիրներին, հատկապես իրավաբանութիւնից: Նա սովորել էր համալսարան եւ երկար տարիներ հարկավոր փաստաբան էր: Դրանով հանդերձ, նա անվախ էր, չէր վիստովում ու հրապարակայնորեն պաշտպանում էր իր ազգին: Երբ Երիտթուրքերի առաջնորդները համոզվեցին, որ իրենք իրենց թերի ուսումով ոչինչ չեն հասկանում քաղաքականութիւնից եւ կառավարչութիւնից, եւ որ ազատութեան ու կառավարութեան օրենսդրութիւնից ընդհանրապես ոչինչ չեն ըմբռնել, նրանք ետ դարձան դեպի իրենց թաթար նախահայրերի համակարգին, քանի որ երկրի անմեղ բնակչութեան ամայացումն ու բնաջնջումը ուղղակիորեն այն էր, ինչին որ ընդունակ էին: Նրանք երկու պատգամավորներին Զոհրապին եւ Վարդգեսին ուղարկեցին Կ. Պոլսից դեպի երկրի խորքերը, հրաման տուեցին նրանց ճանապարհին սպանելու եւ լուր տուեցին, թե՛ նրանք հարձակման ենթարկուած կլինեն ավազակախումբի կողմից: Իրենց ատելութեան պատճառն այն էր, թե՛ այդ հայերը կրթուած, ազդեցիկ եւ խոհեմ մարդիկ էին, քան թե՛ իրենք անձամբ: Ինչի՞ համար էր անհրաժեշտ ավազակների անմիջական հարձակումները այդ երկու հայերի վրա: Սուտը բացահայտ է, նրանք սպանուեցին խաբեքա Ահմեդ-էլ-Տերգի

կողմից, մի նրդունալ միութենականներից, այդ պատճառով էլ սպաննց Ձնկի բնյր: Նրա պատմութիւնը այս արագալուր տարածուող աշխարհում հայտնի է եւ թե՛ ինչպէս Միութենականները նրան պատժից եւ բանտից հեռու պահեցին:

Գիշերը Քարանփրեմում անցկացնելուց հետո, արեւի ծագումը մենք դիմաւորեցինք Գեվերեկում: Կես ճանապարհին փողոցում մենք նորից ականատես եղանք մի սուկալի տեսարանի: Սպանուածների դիակները մեծ քանակութեամբ ընկած էին ճանապարհի երկու կողմերին տղամարդիկ եւ կանայք միասին, արիւնոտ դիակները արեւից դարձել էին սնւ: Ինչքան մենք ավելի էինք մոտենում Գեվերեկին, այդքան դիակների քանակը ավելանում էր, որոնցից մեծ մասը երեխաների դիակներ էին: Երբ մենք Գեվերեկում գնացքից իջանք, տեսանք, թե՛ ինչպէս ԽԱՆՍԻ ծառայողներից մեկը, դեղնավուն մազերով մի երեխայի նետնց պարսպի ետեւը: Հարցումին ասաց, թե՛ տանը կային երեք հիվանդ հայուհիներ, որոնք գնացքից ետ կմնային: Մեկը կարող էր երեխայի կյանքը պահել, սակայն չէր կարող կերակրել, որովհետեւ նա հիվանդ էր, այդպէս էլ նա մահացավ: Եվ ծառան դուրս շարտնց, ինչպէս սասկած մի մուկ:

## Փրկագնի խնդրանքը

Երբ մենք Գեվերեկում էինք, պատմեց ինձ Արիֆ Էֆենդին, այն բանից հետո, երբ նա կառավարչութիւնում էր, որ քաղաքի ոստիկանական պարետը եւ ոստիկանապետը պահանջել էին իրենից, որ հինգ հայերին, որ իր մոտ էին, թողնեն իրենց մոտ: Երբ նա հրաժարվեք, նրանք համառած պիտի լինեին, որ, երբ նրանք հաստատորեն Դիարբեքիր են ուզում հասնել, պետք է 50 ֆունդ փրկագին վճարեն: Երբ մենք Խանի մոտ եկանք, սպան որոշեց Տեր Իսահակին առաջ բերել եւ ասաց, թե՛ ինչպէս է գործերի եղելութիւնը: Նա խոսեց իր ընկերների հետ եւ ստացավ պատասխան, որ իրենք միայն 10 ֆունդ կկարողանան վճարել, քանզի բոլորը միասին այդ կլինեն, ինչ իրենք կունենային: Սպան հաւատացել էր նրանց, վերցրել 10 ֆունդ եւ խոստացել մյուսներին ազատ արձակել: Արդեն Հալեպում, նա ոստիկանական պարետի հետ վիճել էր, վերջինս ցանկանում էր հինգ հայերին ետ պահել: Նաեւ Ահմեդ բնյր Ուրֆայի անկանոն պարտիզանական ջոկատի գլխավորը, ուզում էր նրանց նոյնպէս թաքցնել եւ չնայած որ այն ժամանակվա այդ ամենահզոր կոմիտեի միութեան եւ առաջադիմութեան անդամ էր, վեճի բռնվեց սպայի հետ հայերին ետ տալ ու նրանց հաստատ մինչեւ Դիարբեքիր հասցնել:

Հաջորդ առավոտ մենք թողնցինք Գեվերեկը: Երբ մենք Դիարբեքիրին էինք մոտենում, ճանապարհին դիակները շատանում էին եւ հանդիպում էինք թափառող բազում կանանց, որոնք ոստիկանների վախի տակ հոգնած եւ թշուառ դեպի Գեվերեկ էին գնում: Իրենց դեմքի վշտի եւ արցունքների հետքերը կփափկացնեին քարերն, ու վայրի գազանների կարեկցութիւնը կշարժեին: Արդյո՞ք ինչ էին արել Աստծու անունից այդ կանայք: Արդյո՞ք նրանք պատերազմի էին առաջնորդում ընդդէմ թուրքերի: Թե՛ արդյոք իրենցից որեւէ մեկին էին սպանել: Ի՞նչ ոճիր էին գործել այդ անօգնական արարածները, որոնց միակ մեղքը այդտեղ լինելն էր, որ նրանք հայուհիներ էին, որ հոգ էին տանում իրենց տնային տնտեսութիւնը, դաստիարակում էին իրենց երեխաներին եւ ուրիշ ոչինչ չէին մտածում, քան իրենց ամուսինների առողջութեան ու իրենց տնային պարտականութիւնների կատարման մասին:

Ես հարցնում եմ ձեզ մուսուլմաններիդ, արդյո՞ք այն իբրեւ հանցանք է կարեւորվում: Խորհեք մի պահ, ինչ են արել այս խեղճ կանայք: Արդյո՞ք այս մարդկային էակները աննշան են, քան թուրք կանայք: Եթադրենք, թե՛ իրենց ամուսինները այդպիսի վերաբերմունքի արժենային, սակայն ճշմարիտ է այն որ նրանք ապացոյց կբերեին, որոնցից սակայն անձամբ վայրի կենդանիները կամաչեին: Ղուրանում այսպէս է ասվում. »Գործը մի բարդացրո՛ւ մեկ այլ բեռներով«, որ ցանկանում է ասել, մյուսների հաշվին մի թողիր, որ քեզ պատժեն:

Ինչ են արել այդ խեղճ կանայք կամ էլ իրենց երեխաները: Կարող են արդյո՞ք թուրքական կառավարութեան մարդիկ ինչ-որ մի աննշան ապացոյց առաջ բերել, իրենց այդ գործելակերպը արդարացնելու եւ իսլամ ժողովրդին համոզելու համար, որ այդպիսի գործերը օրինականորեն բացատրել կամ էլ մերժել: Ոչ, նրանք չեն կարող նույնիսկ մի բառ առաջադրել ժողովրդի դիմաց իրենց բարքերն արդարացնելու, եւ օրենքները ճշմարտութեան ու առողջ դատողութեան վրա հիմնավորել:

Ճիշտ է, որ այդ խաբէբաները, որ Իսլամի եւ խալիֆայութեան գաղափարախոսներ են, եւ մուսուլմանների պահպանողների հրամանների համաձայն, խախտել են Աստծու պատուիրաններն ու Ղուրանը, որպէսզի ծաղրեն մարգարեների ավանդութիւններն ու մարդկութիւնը: Իրականում, նրանք այնպիսի մի գործ են կատարում, որոնց համար Իսլամը կապտամբեր, որոնցում նմանապէս ինչպէս մուսլիմները եւ աշխարհի բոլոր ժողովուրդները, ի վիճակի են Մուսլիմների, Քրիստոնեաներին եւ Աստծու ծառայողներին զայրացնել: Նոյնիսկ Աստուած ապրեց, որ դա մի խայտառակ ոճրագործութիւն է, որը ոչ մի ժողովուրդ դեռ չի սկսել, որ իրենք անձամբ իրենց քաղաքակրթութեան համար են պահում:

## Անապատի Երեխան

Երբ մենք ահագին առաջացել էինք, ճանապարհին տեսանք մի կանգնած երեխայի, ոչ շատ մեծ, հագիվ չորս տարեկան, թարմ գոյներով, կապոյտ աչքերով եւ ոսկեփայլ մազերով, ամբողջ տեսքով հարուստ եւ ձեռներեց ընտանիքից: Այն կանգնած էր արևի տակ, անխոս, առանց որևէ շարժումի: Մեր սպան կանգնեցրեց գնացքը, իջնելով հարցրեց երեխային, սակայն նա չպատասխանեց եւ չասաց ոչ մի խոսք: Սպան արտաբերեց. »Երբ մենք երեխային մեր հետ վերցնենք, ապա այն մեզանից կվերցնի իշխանութեան օրգանը եւ այն կդառնա իր ժողովրդի ճակատագրի մի բաժինը եւ կապանուի: Ամենալավն այն կլինի, որ մենք թողնենք նրան այստեղ: Թերևս Աստուած մի քորդի ողորմութիւն կանի, որպէսզի նա իր հետ վերցնի նրան ու կրթի«, ոչ մեկը ի վիճակի չեղավ մեզանից ինչ-որ բան հակառակ ասելու: Նա բարձրացավ նորից, ու մենք շարժվեցինք առաջ, ավելին, ուր որ մենք երեխային թողեցինք, ինչպէս որ գտնի էինք, անլեզու էր, առանց արցունքների եւ արտասուքների: Ո՞վ գիտէ, որ հարուստ մարդու որդին կարող էր լինել այդ երեխան: Հագիվ էր այս երեխան լոյս տեսել, եւ այսպիսի վատ բաներ էին արել իր ծնողների հետ ու երկրի ժողովուրդը արդեն իսկ որք էր: Նրանք, ովքեր ուզում էին իրենց հետ վերցնել, հոգնած կլինեին նրան տանելու, քանի որ կանայք հագիվ թե՛ կարողանային իրենք իրենց քարշ տալ ու այդպէս նրանք թողել էին նրան ետ, այստեղ անապատում, հեռու մարդկային բնակավայրից: Մարդիկ, որոնք լաւ կենդանիներ են եւ կենդանիների մի լավ հավաքածու կդառնան, կարող էին այդտեղ գալ, որ նրանք իրենց սեփական երեխաներին չեն գթում եւ այն կիզիչ արևի տակ սոված ու ծարավ են թողնում, վայրի գազաններին որպէս ավար:

Երբ մենք երեխային լքեցինք, մեր սրտերը լցվեցին լի խղճահարութեամբ ու տանջանքով: Արեւմուտից առաջ մենք հասանք մի խանութիւն Քարավանփրեյ, մի քանի ժամ Դիարբեքիից հեռու: Մենք ամբողջ գիշեր անցկացրեցինք այդտեղ եւ հաջորդ առավոտեան մեր ճանապարհը շարունակեցինք այլանդակուած դիակների մարտադաշտի միջով: Ճանապարհի երկու կողմերում միշտ նոյն տեսարանն էր, այստեղ ինչ-որ մեկը գնդակահարված կրծքից, կամ բզկտուած կին, երեխա, որ իր վերջին քունը մոր մոտ էր գտել: Մի աղջիկ արեան մեջ երիտասարդական վատ խայտառակուածութեամբ: Ահա այսպէս, այն մնում էր մեր ճանապարհին, մինչևէ մենք Դիարբեքի եկանք, մի ջրանցքի մոտ Քարա-Փունար, ուր ակնհայտորեն ինչ-որ մարդասպանութեան մեթոդի բազմապիսութիւն եւ կոտորած պետք է եկած-անցած լիներ:



մեջ էր: Երբ նա տեսավ, թէ ինչ կատարուեց իր ժողովրդի հետ, ի վիճակի չէր նա այդ խայտառակութիւնը եւ նախատինքը կրելու, կերտսինը լցրեց իր վրա եւ կագրեց: Մի մուսուլման, որը բանտարկյալ էր, քանի որ այս պատահարից երեք տարի առաջ մի նամակ էր գրել այդ եպիսկոպոսին, պատմեց ինձ, որ եպիսկոպոսը մի բարձր ուսում ստացած անձնավորութիւն էր, անվախ եւ լցված էր նախանձախնդրութեամբ իր ժողովրդի հանդեպ, նա չէր կարող ունենալ մահուան սարսափ, սակայն եւ չէր կարող տանել ամոթն ու ստորացումը:

Բանտարկուած քուրդերից մի քանիսը նոյնիսկ բանտում հարձակուեցին մի քանի հայերի վրա եւ սպանեցին նրանցից երկու կամ երեք հոգու ազահութեան պատճառով փողերը եւ հագուստները ձեռք բերելու: Ոչ ոք այս արարքի համար հաշուետվութեան չտարուեց: Դիարբերքիւրում կառավարութիւնը հայերից շատ քչերին թողեց ապրելու, այնպիսինները, որոնք ձեռագործ աշխատանքներ էին սովորել, կամ կոշկարարութիւն, կամ էլ այլ ուրիշ բաներ, բանակի համար անելու: Բանտում մնացին 19 հոգի, որոնց ես տեսա այնտեղ եւ խոսեցի իրենց հետ: Իշխանութիւնը հայտարարեց, որ նենգադավ մադասպաններ են: Վերջին ընտանիքը, որ 1915թ. նոյնմբերին արքարուեց, դա Դունջյան ընտանիքն էր: Այդ ընտանիքը պաշտպանութեան տակ էր անցել միակ քաղաքի գրառող մուսուլմանների մոտ, այն էլ իրենց փողի կամ էլ կանանց շնորհիվ:

## Տիգրան

Տիգրանն Դիարբերքիւրում գործող կենտրոնական կոմիտեի քաղաքական կուսակցութեան դաշնակցութեան անդամ էր: Քաղաքի մի պաշտոնեա, որը պատկանում էր կուսակցութեանը, նրա առաջադիմութեան եւ միասնութեան համար, պատմեց ինձ, որ իշխանութիւնը բռնել էր նրան եւ նրանից պահանջած կլիներ, որ նա հայտնի իր կուսակցութեան անդամների հարազատ մարդկանց անունները: Նա հրաժարուել էր եւ ասել, որ նա չի կարող անունները տալ, վաղուց կոմիտեն դրա վերաբերյալ որոշած կլինէր, թէ այն տեղին կլինի թէ ոչ, կառավարութեանն անունները տեղեկացնելու: Նա տարբեր եղանակներով ենթարկվում է կտտանքների: Ոտքերը դրվում են սառայցի մեջ, մինչ նրա հալչելը եւ նա էլ չէր կարող գնալ, նրա եղունգները ու թարթիչները քրցանով քաշել էին, եւ նման այլ բաներ, սակայն չէր ասել ոչ մի խոսք ու իր ընկերների անունները չէր թուարկել, որի համար էլ չէր կարողանում շարժուել: Նա արքարուեց մյուսների հետ եւ իր ժողովրդի կյանքից հեռացավ պատուարժան մահով:

## Հակոբ Բաթանյան

Հակոբ Բաթանյանը հայ բանտարկյալներից մեկն էր, որին կառավարութիւնը իբրեւ նենգադավ մարդասպան էր հայտարարել, որի ծառայութիւնը հայերի համար էր: Ես հաճախ էի խոսում նրա հետ եւ խնդրում էի նրան, որ պատմի ինձ իր պատմութիւնը: Մի օր, այսպես սկսեց նա, իր տան մոտ, մի ոստիկան ծեծեց իր դուռը եւ ասաց, որ ոստիկանապետն իրեն կանչում է իր գրասենյակ խոսելու համար: Նա մտել էր ներս եւ ոստիկաններից մեկը հարցրել էր նրան հայկական կուսակցութեան եւ նրա դարանակալ եղած մարդկանց մասին: Նա ասել էր, որ չգիտի ոչ մի կազմակերպութեան եւ ոչ էլ ինչ որ նենգադավ մարդասպանութեան մասին: Դրա վրա նա ստացել էր նրբանների ծեծ եւ երկար օրեր շարունակ տարբեր տանջանքներ կրել, մինչեւ որ նա կյանքից հույսը կտրել էր եւ սիրով ցանկանում էր մեռնել, քան թէ երկար սպասվող մահը հանդուրժեր: Նա իր մոտ ուներ մի դանակ եւ երբ չարչարանքները շատ էին ցավացնում եւ չէր կարողանում երկար տանել, նա խնդրել էր ոստիկանին արտաքնոց գնալու համար: Եւ երբ նա գար, պետք է նրանց ամեն ինչ պատմել, այն, ինչ գիտեր հայերի գործերից: Ոստիկանի օգնութեամբ նա գնում է դուրս եւ կտրում է դաստակի երակը, ինքնասպան լինելու մղադրութեամբ: Արյունը հոսում է դուրս, նա գնում է

մինչեւ ոստիկանական գրասենյակի դռան մոտ, ուր էլ ուժասպառ է լինում: Նրանք ջուր են լցնում նրա դեմքին, այդպիսով նա կրկին գիտակցութեան է գալիս: Ոստիկանապետը շփոթվում է եւ նրան ուղարկում հիվանդանոց, մինչեւ որ կկազդուրվեր: Ես տեսա իր ձեռքերի վերքերը, որոնք արդեն ամբողջութեամբ առողջացել էին: Սա էր այն պատմութիւնը, որ նա անձամբ պատմեց ինձ: Նա նաեւ խնդրեց ինձ, մի հայկական թերթում հրատարակել, որը լույս է տեսնում Ամերիկայում, դրանով հանդերձ իր եղբայր Կարապետը կկարդա այն, որ այժմ Ամերիկայում է եւ կհավատա, որ իշխանութիւնն իր ընտանիքից ոչ մի անդամի չի թողնլ ապրելու:

Ես հաճույքով էի հաղորդակցվում Երիտասարդ հայերի հետ, որոնք բանտում էին եւ շատ էի գրուցում այդ գործերից, թե՛ ինչպէս, ոչ մի ազգ անցյալում պատմութեան մեջ այդքան չի տառապել: Այդ զինվորները զինվորական դատարանից հետո ուղարկվեցին Խարբերդ եւ այնտեղ իրենց դատապարտությունն ընդունելու: Ես լսեցի, որ նրանք, այնտեղ ժամանելով Իսլամ էին ընդունել, ոչ թե մահվան վախից, քանի որ իրենց օրենքի խախտումը նրանք տուգանքով չէին պահելու, երբ այն նրանք տեղափոխել կկարողանային, այլ միայն քուրդերի միջոցով կատարվող նախատինքային վերաբերմունքից խուսափելու համար: Նախքան իրենց փոխադրումը, նրանք հարցրին ինձ, թե՛ ինչ լսած կլինեի, ճանապարհին իրենք սպանվելու էին, թե՛ ոչ: Հարցադրումից հետո ես իրենց հավաստիացրեցի, թե՛ իրենք չեն սպանվի, նրանք ուրախ էին եւ ասացին, որ բոլորը ցանկութիւն ունեն միայն ապրելու, մինչ նրանք կտեսնեն, թե՛ պատերազմն ինչ վերջ կունենա: Նրանք ասացին նաեւ, որ հայերը անձամբ իրենք պետք է իմանային, որ հանցանքի պատասխանատվութիւնն իրենց մեջ պետք է փնտրել, քանի որ իրենցից ոչ մեկը չկարողացավ ըմբռնել, որ նրանք թուրքերի առաջ իրենց աչքերը պետք է արթուն պահեին:

Ժամանակ առ ժամանակ ես այցելում էի իմ ընկերակցին, սակայն իմ ազատումից հետո, բանտատերը շատ թույլ չէր տալիս իրեն այցելելու: Վերջինից ես կարող էի թույլտվութիւն խնդրել, ընկերոջս հետ բանտից դուրս խոսել: Որոշ ժամանակ անց ես նսրից հարցրեցի եւ իմացա, որ նրանք, ինչպէս մյուսները իրենցից, պիտի դատավճիռի ենթարկվեին: Պաշտոնաթող անձի մի ձայն ինձ դեպի դուրս հրավիրեց: Օրերից մի օր ես տեսա մի ոստիկանի, որն ըստ օրենքի կարճ ժամանակով բանտարկված էր մեզ հետ, քանզի մեղադրված էր արժեքավոր իրերի գողութեան համար, որոնք պատկանում էին մահացած հայերին: Ահա նա, ինձ առաջվա ուղեկիցին, ճանաչեց եւ ես հարցում արեցի իրեն: Նա պատմեց, որ ինքն անձամբ իր սեփական ձեռքերով սպանել է Իսահակ քահանային: Ոստիկանները գրագ էին եկել, թե՛ ով կկարողանար նրա քահանայական գոակին գնդակով խփել: »Ամենալավ հարվածը ես հասցրեցի, ուղղակի գոակին խփեցի, գլխին եւ նրան երկրորդ գնդակը հասցրեցի, աջ կողմին«: Իմ պատասխանը լռութիւնն էր:

Այդ մարդը լիովին համոզված էր, որ այդ սպանությունն անհրաժեշտ էր, քանզի Սուլթանն էր հրամայել:

## Կեղծված նամակներ

Երբ առաջին անգամ իշխանությունը հրաման հանեց Դիարբեքիից 700 հայերին արքայրելու, պաշտոնական ծառայողներին մատնանշվեց, նամակներ շարադրել ուղարկվածների անվանումների ստորագրութիւններով եւ այն իրենց ընտանիքներին ուղարկել, նրանց մոլորութեան առաջնորդելու, քանի որ վախենում էին, որ հայերը կարող էին ինչ որ տեղ բաներ ձեռնարկել, ծրագիրն արագացնել ու այդպիսով նրանց կողմից իրագործվող բնաջնջմանը խանգարել: Դժբախտ ընտանիքները մեծ քանակութեամբ նամակներ հանձնեցին նամակատարներին: Կառավարությունը մի քուրդի, վատահամբավ խմբից, որը սպա ոստիկան էր, հանձնարարեց սպանել հայերին եւ նամակներն իրենց



հասցնատներին ուղարկել: Երբ կառավարութիւնը արդէն վստահ էր հայերի ճակատագրերի գործում, մարդ առաքեց նաեւ քուրդին սպանելու, որպէսզի նրա միջոցով լուրը դրսում չտարածվի: Քուրդի անունն էր Հասի Համի:

## Կաթոլիկներ, ասորիներ եւ բողոքականների ջարդը

Ոչ միայն հայերին, այլեւ կաթոլիկներ եւ ասորական /Յակոբիկյաններին/ համայքներին լիովին կոտորեցին, իսկ Դիարբէքի բողոքականներից չմնաց ոչ մի մնացորդ: Դիարբէքից ասորական 80 ընտանիքների, մեծամասամբ քաղկեդոնականների, սպանեցին, իսկ միայն Վիլայեթի մնացած վայրերը պրծան մահից, բացի Միդիատից եւ Մարտինից: Երբ ավելի ուշ հրաման եկավ, թե միայն հայերին են սպանելու, իսկ մնացած քրիստոնեաներին ուզում են ձեռք չտալ, կառավարութիւնը հոգաց նրանց պահպանման համար: Միդիատի շրջանի ասորիներն անվախ մարդիկ էին, քան թե մյուս վայրերի տոհմերը: Երբ նրանք լսեցին, թե ինչ կատարվեց իրենց մյուս եղբայրների հետ եւ նրա հարեւանությամբ, որոնք Դիարբէքիում էին, բոլորը համատեղվեցին միասին, դիրքավորեցին երեք գյուղեր Միդիատի մոտերքում եւ պատրաստվեցին, քանզի իրենք հարձակվելու էին աննկարագրելի հերոսութեամբ, արիական դիմադրութիւն ցույց տալով: Իշխանութիւնն ընդդէմ նրանց ուղարկեց երկու կանոնավոր ջոկատ, ոստիկանական ջոկատներից մեկը նկատեց, որը վաղուց արդէն Միդիատ էր գործուղվել, նաեւ քրդական ցեղերին էին զինակոչել, սակայն իզուր: Նրանք պաշտպանում էին իրենց կենսքը, պատիվն ու ունեցվածքը ընդդէմ կառավարութեան հզոր Տիրանիայի: Արձակվում է մի կայսերական հրամանագիր, որն իրենց ներում էր խոստանում, սակայն նրանք նրան ոչ մի վստահութիւն չցուցաբերեցին եւ չհանձնվեցին, քանի որ փորձը նրանց սովորեցրել էր, որ երկրագնդի վրա չկա մի այնպիսի կառավարութիւն, ինչպիսին թուրքականն է, այսօր ետ են վերցնում այն, ինչ երեկ էին խոստացել, որոնք այսօր դաժան տանջանքներով են սպանում նրանց, որոնց երեկ ներում էր տրվել:

## Բիթլիսից մի պաշտոնատար գործակալի գրույցը իմ ընկերոջ հետ, նրբ մենք Դիարբէքիի սրճարանում տեսանք

Գործակալը. «Ես Դիարբէքիում տեսնում եմ նաեւ շատ հայերի: Ինչպէս կարող է լինել, որ նրանք դեռ այստեղ են»:

Իմ ընկերը. «Մրանք հայեր չեն, այլ ասորիներ եւ քաղկեդոնականներ /կաթոլիկներ/: Գործակալը. «Բիթլիսի կառավարութիւնը Վիլայեթում չի թողել նույնիսկ մի քրիստոնեայի, նոյնը եւ նմանապէս շատ քիչ Մուշում»:

Երբ մի բժիշկ մի հիվանդ քրիստոնեայի սրտի համար դեղ նշանակեց, ամբողջ Վիլայեթում չկար մի քրիստոնեա, չնայած որոնելու իրավունք ուներ:

## Չոհաբերվելիք պաշտպանութիւն

Հայերը արգելափակված էին Դիարբէքիի գլխավոր բանտում ուր եւ երբեմն հաճախում էի նրանց: Մի օր, երբ ես առավոտեան վաղ բանտ եկա, տեսա որ նրանք զբաղված էին բրնձի, ալյուրի եւ փողի հավաքելով: Ես հարցրեցի նրանց, ինչ են ուզում անել, նրանք պատասխանեցին. «Երբ մենք չենք կարողանում ամեն շաբաթ հավաքելը կազմակերպել եւ այն քուրդերին տալ, նրանք հայոյում եւ խփում են մեզ, այսպէս տալով մենք նրանցից մի քանիսին, դրանով մենք մեզանից մյուսներին պահում ենք իրենց ընկերների բիրտութիւնից:

Ես գոռացի. »Սա ոչ մի բան է, քան Աստծոն մոտ գնալը« եւ տխուր անցա նրանց միւս կողմերը:

## Դժբախտ հայերի տնդափոխումը դեպի մահ

Սա մի սարսափելի գործողութիւն էր իրենց սարսափազդու վայրենութեան միջոցով: Դիարբերիքի ոստիկաններից մեկը պատմեց ինձ, թե ինչպէս էր այն ընթացում: Երբ հրաման տրվեց մի ընտանիքի ձերբակալել եւ սպանել, մի պաշտոնատար եկավ այդ տունը, հաշվեց ընտանիքի անդամներին եւ հանձնեց ոստիկանական պարեմին կամ էլ ոստիկան սպային: Ժամապահներ կարգվեցին տան պահպանման համար, մինչեւ որ ժամը ութին կարթնացնեին: Միաժամանակ ընտանիքը բաժանվում էր իրար մեջ, նրանց ցանկանալով ճանապարհի համար նախապատրաստել: Կանայք գոռում էին եւ հեծկլտում, նրանց դնմբերին վախի եւ հուսալքութեան պատկեր էր նկարագրվում, դեռ մահը չեկած, գրեթէ մահացած էին: Ժամը ութից հետո գալիս էին մեքենաները եւ նրանց տանում էին մի մոտիկ վայր, ուր նրանք գնդակահարվում էին կամ էլ ինչպէս ոչխարներ դանակով մորթվում, դաշտունահարում կամ ջարդ կազմակերպում:

## Հայերի ունեցվածքի վաճառքը եւ խաչերի կործանումը

Հայերի բնաջնջումից հետո, բոլոր նրանց կահկարասիները, հագուստեղենը, սպիտակեղենը եւ ամբողջ սարքերը, խանութներից ու գործարաններից նաեւ այն ամենը, ինչ կար, դարսվում էին եկեղեցիներում եւ այլ մեծ կառույցներում: Կառավարութիւնը կոմիտե ստեղծեց այդ իրերի վաճառքի համար, այն ամենացածր գներով ծախել-վերջացնել: Հասույթը հանձնվում էր կառավարության գանձանակ: Գորգերը կարելի էր 30 թուրքական ֆունդ /550Մարկ/ արժենալ, սակայն 2 մեջիդիսով/7 Մարկ/ գնել: Եվ այդպէս մնացյալ իրերենների հետ, այն ինչ վաճառքի էր հանվում: Իսկ նվագող սարքերի, դաշնամուրի եւ այլնի համար ոչինչ չէր վճարվում: Ով ուզում էր, կարող էր ունենալ: Փողն ու բոլոր զարդեղենները շրջում էին ոստիկանների եւ վախի վերին իշխանի Ռաշիդ բեյի մոտ: Երբ վախի Կ. Պոլիս գնաց, նա իր հետ վերցրեց ավարը: Մարդու միտքը խաղաղվում է, երբ խորհում է, որ հայ ազգը, այդ անվախ ժողովուրդը, որն աշխարհն իր արիութեան, ուժականութեան, իր մշակույթի զարգացմամբ ու իր զարմանալի կրթութեամբ էր ճանաչում, որ երեկ դեռ Օսմանյան հարստութեան բոլոր մշակող եւ ջանացող ժողովուրդների մեջ էր, այսօր մոռացութեան էր տրվելու, կարծես այն երբեք չի ծաղկելու: Փառավոր հայ գրականութիւնը անպիտանի էր դարձել եւ ծառայում էր թուրքերին պանիր կամ արմավ փաթաթելու համար: Եւ լսեցի, որ մի բարձրաստիճան թուրք սպա հայկական գրադարանից 30 հատ. ֆրանսիական մի Երկ 50 Պիաստերով /9Մ/ էր գնել: հայկական դպրոցները փակվել էին, որոնք առաջ աշակերտներով լիքն էր:

Ինչպէս եւ անձամբ տեսա, խաչերը գցվում էին ներքեւ եկեղեցու տանիքներից: Եկեղեցիներն որպէս խանութներ եւ վաճառատներ էին դարձել սպանվածների ունեցվածքների օգտագործման համար:

Սպանութեան մեթոդները կատարվում էին տարբեր տեղերում: Մի սպա պատմեց ինձ, որ քիթիսի վիլայեթում իշխանութեան օրգանները հայերին կլստնեցնեին, որոնք շատ ծղոտներ եւ խզուզներ էին ցցել, որոնք կարողացել էին ծղոտների կապոցներն իրենց դռների առաջ պատրաստել եւ բույսերի վրա անել, դրանով հայերին մխրեցնել: Նա ասաց, որ երբեմն պատահում էր, որ հարյուրավորներ մարագներում էին սպանվում: Դրա հետ մեկտեղ նա տեսել է, թե ինչպէս մի աղջիկ իր սիրելիին գրկած եւ առանց դողի նրա հետ մարագ է մտել նրա հետ միասին մեռնելու: մուշում նույնպէս մի մասը մարագներում են այրվել, սակայն

սպանութեան մեծամասնութիւնը կատարվել է գնդակահարութեամբ կամ էլ դանակներով մորթել են, ինչի համար էլ կառավարութիւնը ուներ իր ամենավատ նպատակը, ամեն օր 1 ֆունդ որպէս վարձ պահել:

Մի բժիշկ, որի անունն էր Ազիզ Բեյ, պատմեց ինձ, երբ նա Մերսիփանում էր Սիվագի վիլայեթում, լսել էր, որ հայերի մի ամբողջ քարավան ուղարկվել է քսոք: նգնացել է կայմակամ եւ ասել. «Դու գիտես, որ եւ բժիշկ եմ եւ որ բժշկի ու դահիչի միջեւ չկա ոչ մի տարբերութիւն, քանի որ մեծամասամբ բժժիշկներն էլ են այդ բանն արել, մարդկանց դիակահերձել: Այս օրով էլ կայմակամները նույնն արեցին, ինչպէս մենք մարդկանց մարմինները դիահարել: Ես խնդրում եմ քեզ, թույլ տուր ինձ այդ բժշկական օպերացիային ներկա լինել»: Կայմակամը թույլատրել է, եւ բժիշկը գնացել էր ներս: Ջարդի տեղում նա գտել է չորս մորթվածներ, յուրաքանչյուրը խոցված երկար դանակով: Ոստիկանները հայերին բաժանում էին տաս հոգանոց խումբերի եւ թողնում էին նրանց առանձին մորթվել դահիճի մոտ: դահիճները կտրում էին հայերի երկարացրած պարանոցները: Նրանք անում էին դա եւ ինչպէս ոչխարներ մորթվում էին: Բժիշկը զարմացած էր նրանց անհողողութեան վրա, որ տեսնում էր մեռնողների հայացքներին, որոնք ոչ մի խոսք չէին ասում եւ ոչ էլ որեւէ վախի նշան էին ցոյց տալիս:

Իսկ կանանց եւ երեխաների հետ վարվում էին հետեւյալ կերպ: Նրանց կապում էին միասին եւ նետում էին ժայռերից ներքեւ, դրանով նրանք ներքեւում կտորների էին բաժանվում: տեղը, ուր այս արարքն էր կատարվում, ընկած էր Դիարբեքիի եւ Մարտինի միջեւ ու մինչեւ այսօր էլ դեռ հայտնաբերվում են այդ կոյտերով ոսկորները:

Մեկ ուրիշը պատմեց ինձ, որ կառավարութիւնը Դիարբեքիում հայերին ոչ միայն գնդակահարութեամբ եւ դահիճների օգնութեամբ են սպանել, այլ եւ հաճախակի էր լինում այն: Դրանով հանդերձ նաեւ, նրանց հատուկ ցիստերների եւ քարանձավների մեծ էին արգելափակում, ու մուտքը փակվում էր եւ թողնում էին որպէս կենդանի թաղված էակների: Խնդրվում էին նաեւ Տիգրիսում եւ Եփրատում, եւ դիակները, որոնք ջրի մեջ էին մնում, պատճառ էին դառնում համաճարակի: 2000 հայեր մորթվել են Տիգրիսում եւ Քաստելի եւ սուլթան Մուրդադի ամրոցների միջեւ Դիարբեքիի պատերի առջեւ: Մի վայրում, որը գտնվում է քաղաքից 1,2 ժամ հեռու:

Ոչ մի կամեցած չկա, որ այդ իրողութիւնները, որոնք պատմվում էին ոստիկանների եւ քուրդերի կողմից, հիմնված են ճշմարտութեան վրա: Երբ ոստիկանները հայերի մի քարավան էին ստանձնում, փորձում էին բոլորին առանձնացնել, տղամարդկանց եւ կանանց առանձին, վերցնում էին իրենցից ամբողջ ունեցած փողերը, որոնք գտնում էին նրանց մոտ, ապա կողոպտոյիլ էին նրանց թանկարժեք հագուստները, որոնք նրանք դեռ կրում էին իրենց վրա: երբ նրանք համոզված էին, ոչ փող, ոչ շատ արժեքավոր իրեր էին մնացել, նրանք հայերին վաճառում էին քուրդերին այն պայմանով, որ նրանցից ոչ մեկը չապրի: Գինն որոշվում էր զոհերի քանակով:

Քուրդերի քարավանի հետագումից հետո, նրանք հանում էին բոլոր հայերի տղամարդկանց եւ կանանց հագուստները, այդպէս մնալով մերկ: Հետո գնդակահարում էին բոլորին միասին: Վերջում հետագնում էին դիակները, ստակից հետո բերանը եւ փորոտիքը ու նոյն մտադրութեամբ էլ նաեւ կտրատում էին հագուստները եւ ոտնամանները:

